

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով յայտնեցաւ զարձակմանէ անդամոց նորին տ. Մակար եպիսկոպոսի և տ. Մխիթար վարդապետի ըստ խնդրանաց իւրեանց և զհաստատութենէ ի նոյն պաշտօն տ. Յովհաննէս եպիսկոպոսի Շիրակունւոյ, տ. տ. Յուսիկ, Մատթէոս և Բարգէն վարդապետաց, և պատուիրեցաւ հրաւիրել զնոսա ի պաշտօն իւրեանց։ Թ. 817.

— Յանուն Փոխ. Թեմակալին Երևանայ, որով թոյլ տուաւ թաղել ի գաւթի եկեղեցւոյն Ալափարս գեղջ զհանգուցեալ աւագ քահանայն Թադիանոսեան։ Թ. 821.

— Յանուն գործակալին Աշտարակայ, որով արտօնեցաւ օշականցի Մկրտչի Զարգար-Սարգսեան պսակիլ ընդ ապօրինի կենակցին իւրում Նուբարայ Մանուկեան։ Թ. 836.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով հրամայեցաւ կարգադրել, զի Տիրայր վարդապետն բնակեսցի ի վանս

ռ. Սարգսի և տացցի նորոգ հաստատեալ Առաջնորդին Վրաստ. և Իմերէթի Տ. Գարեգին եպիսկոպոսի ճանապարհածախք ի Սանահնոյ մինչ ցՄայր Աթոռս և աստի մինչ ցՏփխիս, թողլով զվանահայրութիւն վանուցն Սանահնոյ ի վերայ նորին: Թ. 853.

— Յանուն փոխ. Թեմակալին Հայոց Երևանի, որով ազատ համարեցան անդամք Հոգաբարձութեան Թեմ. Հոգ. Դպրանոցի տեղւոյն ի պաշտամանցն, և պատուիրեցաւ առնել ընտրութիւն նոր անդամոց յայն պաշտօն և զընտրեալսն առաջարկել ի հաստատութիւն: Թ. 854.

— Յանուն պ. տեսչի Գէորգ. Ճեմարանի Մ. Աթոռոյ, որով պատուիրեցաւ հրաւիրել զտ. Յուսիկ վարդապետն ուսուցիչ կրօնական գիտութեանց ի Ճեմարանին: Թ. 558.

— Յանուն վիճ. Կոնսիստորիային Արցախայ, որով լուծեալ համարեցաւ պսակն Մանասայ Գրիգորեան ախտակաչէնցւոյ ընդ Նախշունի Միսկարեանց և թոյլ տուաւ նոցա պսակիլ ընդ ապօրինի կենակիցսն: Ժ. 869.

— Յանուն Հոգ. Կառավար. Գանձակայ ի նոյն միտս: Թ. 869.

— Յանուն Առաջնորդին Հայոց Արցախայ, որով պատուիրեցաւ տալ քառամսեայ արձակուրդ վանահօր Գանձասարայ վանուց Տ. Անտոն վարդապետի՝ կարճելով զստուչութիւն 25 ր. ռոճկի նորա: Թ. 871.

— Յանուն Առաջն. Տեղապահի վանից Տ. Մեսրոպ քահանայի Ճանիկեան. որով յայտնեցաւ վշտակցութիւն վասն մահու ի Տէր հանգ. Սահակ եպիսկոպոսի և պատուիրեցաւ յղել ի Մայր Աթոռս զմատանիս, զխաչն վարդապետական և զպանակէն հանդուցելոյն: Թ. 904.

— Ընդհանրական յանուն Առաջնորդին Հայոց Վրաստ. և Իմերէթի Տ. Գարեգին Եպիսկոպոսի Սաթունեան վասն հաստատութեան նորա յԱռաջնորդ թեմին: Թ. 918.

— Ցանուն Մինոդի Էջմիածնի, որով կարգեցաւ տ. Մատթէոս վարդապետն ի վանահայր Ս. Շողակաթի վանուց։ Թ. 922.

Բ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ յանուն Տ. Բաբգէն վարդապետի, որով շնորհեցաւ վարդապետական լանջախաչ։ Թ. 923.

— Ցանուն գործակալ Թադէոս քահանայի Տ. Թադէոսեան Նորաշէն գեղջ. որով շնորհեցաւ լանջախաչ Թ. 908.

ՔԱՂՈՒԱԾՔ ՄԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յուլիսի 14-ին Մինոդը լսելով Գանձակի նահանգի տ. Նահանգապետի գրութիւնը Կոստանդին Աթալեանցին հոգևորականութեան մէջ ընդունելու մասին, որոշեց թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային ձեռնադրել տալու նրան Ցոր գիւղի վրայ ծխատէր քահանայ, որի մասին և հրաման արձակեց թեմական Առաջնորդի անունով։

Նոյն թուին Մինոդը քահանայութեան արժանի համարեց կաղզուանցի Յակոբ Գալստեան Ղափլանեանցին և գիմեց Կարսի նահանգի տ. Նահանգապետին օրինական հաճութիւնն առնելու համար։

Նոյն թուին Մինոդը լսեց Օտար Դաւանութեանց Դեպարտամենտի № 1519 գրութիւնը, որի բովանդակութիւնն է հետևեալը.—

1889 թուի մարտի 11-ին հրատարակած Բարձրագոյն հրամանով կարգադրուած է հետևեալը. «Հին և հոյակապ